## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

### «Քաղաքացիական կրթություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն» Խորագրով կլոր սեղանի

**Մասնակիցներ**՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողներ

**Անցկացման վայր և ժամանակ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

**Նպատակ**

- Ներկայացնել քաղաքացիական կրթության դերն ու նշանակությունը:
- Ներկայացնել մարդու իրավունքների գաղափարն ու աղբյուրները
- Ներկայացնել քաղաքացու սոցիալական դերերը
- Ներկայացնել քաղաքացու դերը երկրի ժողովրդավարության զարգացման գործում, ակտիվ քաղաքացիությունը
- Ներկայացնել հիմնական միջազգային փաստաթղթերը Մարդու իրավունքների մասին

**Ընթացք**

- Զեկույց- սահիկաշար՝ «Քաղաքացիական կրթություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն» թեմայով
- Բանավեճ «Կլոր սեղանի» մասնակիցների հետ՝ ընթացիկ զեկույցի թեմայով:

**Ակնկալվող արդյունք**

Քաղաքացիական կրթության դերն ու նշանակությունը, մարդու իրավունքների և ժողովրդավարության բարձրարժեք նվաճումները կարևորող, պահպանող, արժեվորող, ազգանվեր հայրենասիրությամբ օժտված հայրենասեր ուսանողներ:

Պատասխանատու՝ Ս. Ավետիսյան

## Լուսաբանում




### «Քաղաքացիական կրթություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն» խորագրով կլոր սեղան

Սույն թվականի նոյեմբերի 25-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, տեղի ունեցավ «Քաղաքացիական կրթություն, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն» խորագրով կլոր սեղան, որին մասնակցում էին հաստատության տարբեր կուրսերի ուսանողներ:

Կլոր սեղանի ընթացավարն էր դասախոս՝ Ս. Ավետիսյանը: Միջոցառման նպատակն էր ուսանողներին ներկայացնել քաղաքացիական կրթության դերն ու նշանակությունը, մարդու իրավունքներ գաղափարն ու աղբյուրները, քաղաքացու սոցիալական դերերը՝ երկրի ժողովրդավարության զարգացման գործում: Զեկույցը ընթացավ թեմատիկ սահիկաշարերով, որոնք ավելի արդյունավետ դարձրին ներկայացվող նյութի խորքային բովանդակությունն ու կարևորությունը: Բանախոսը մասնակիցներին ծանոթացրեց Մարդու իրավունքների մասին հիմնական միջազգային փաստաթղթերին:

Առանձնահատուկ ոգևորությամբ ընթացավ բանավեճը հասարակական կոնֆլիկտների վերաբերյալ: Բուռն քննարկման արդյունքում ներկայացվեցին դրանց ծագման պատճառներն ու կարգավորման ուղիները՝ որպես դրանց հաղթահարման լավագույն միջոց ընտրելով բանակցությունները:

Կազմակերպված կլոր սեղանն ապահովեց ակնկալվող արդյունքը. ուսանողները կարևորեցին քաղաքացիական կրթության դերն ու նշանակությունը, մարդու իրավունքների և ժողովրդավարության բարձրարժեք նվաճումները, որոնք խթանելու են հասարակական գիտակցության բարձրարժեք դրսևորումների ճանաչմանը, մասնավորապես, ՀՀ քաղաքացու ազգանվեր, հայապահպան, հայրենասեր հոգեկերտվածքի ձևավորմանը:

***Ընթացավար՝ Ս. Ավետիսյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Պլան**
**տեսադասի**

**Մասնագիտություն՝** «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում»»
**Կուրս՝** III
**Անցկացման ամսաթիվ՝** 2021թ.
**Թեմա՝** «Պարզ վակումային արևային ջրատաքացուցիչ»

**Նպատակ**

- Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները
- Ծանոթացնել պարզ վակումային արևային ջրատաքացուցիչի հավաքման և մոնտաժման աշխատանքներին

**Դասի կահավորումը** Պրոյեկտոր, համակարգիչ

**Նախապատրաստական աշխատանքներ**
Ուսանողներին հանձնարարել ուսումնասիրել թեման

**Ընթացքը**
**Տեղեկատվության հաղորդում**
- Ներկայացնել արևային պարզ վակումային արևային ջրատաքացուցիչի ֆունկցիոնալ հանգույցները և աշխատանքային ռեժիմը
- Դիտել ֆիլմը
- Ծավալել քննարկում ՝ թեմայի վերաբերյալ

**Ակնկալվող արդյունք**
Լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով հարստացած, տրամաբանող և մասնագիտությունը արժևորող ուսանողներ:

***Դասավանդող՝ Ա. Նազարյան***

Լուսաբանում




**«Պարզ վակուումային արևային ջրատաքացուցիչ» թեմայով ֆիլմի դիտում-քննարկում**

2021թվականի նոյեմբերի 25-ին «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ I կուրսում անցկացվեց «Պարզ վակուումային արևային ջրատաքացուցիչ» թեմայով ֆիլմի դիտում:

Տեսանյութում մանրամասն ներկայացվեց պարզ վակուումային արևային ջրատաքացուցիչի ֆունկցիոնալ հանգույցների, դրանց հավաքման, համալարման և մոնտաժման աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Թեմատիկ ֆիլմը խթանեց և օժանդակեց մասնագիտական գիտելիքների զարգացմանը՝ հետագայում անհրաժեշտ կարողություններ և հմտություններ ձեռք բերելու նպատակով:

Դասի ավարտին ծավալվեց թեմայի վերաբերյալ արդյունավետ և նպատակային քննարկում: Ուսանողների կողմից տրվեցին թեմատիկ առանցքային հարցեր, որոնք լիարժեք պարզաբանվեցին դասավանդող մասնագետի կողմից:

Դասը սովորողներին հնարավորություն տվեց մեկ անգամ ևս համոզվելու ընտրած մասնագիտության արդիականության և կարևորության մեջ:

*Կազմակերպիչ՝ Ալ.Նազարյան*

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐԻ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Բաց դասի պլան**

**Մասնագիտություն՝** «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար»

**Կուրս՝** I

**Թեմա՝** «Ժամանակակից կտրվածքներ»

**Նպատակ**

- Ներկայացնել կտրվածքների էվոլուցիան, կտրվածքների նորարարական մեթոդների արդիականությունը
- Զարգացնել գեղագիտական ճաշակ
- Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները
- Ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն
- Ցուցադրել գործնական կարողություններ և հմտություններ

**Նախապատրաստական փուլ**

Ուսանողներին բաժանել թիմերի, հանձնարարել ուսումնասիրել նշված թեմաները և հավաքագրել համապատասխան տեղեկատվություն/ տեսանյութեր/.

**Ընթացք**

Ներկայացնել

1. Նախաբան. «Կտրվածքների էվոլուցիան»
2. Նորարարական մեթոդների կիրառմամբ ստեղծագործ վարսահարդարների մոդելավորած սանրվածքները

**Գործնական կարողությունների ցուցադրում**

Ուսանողները ներկայացնում են

- մոդելավորած կանացի 4/չորս/ սանրվածքներ՝ ըստ գունատիպերի,
- մանկական 2-4 կերպարային կտրվածքներ

ծավալել մասնագիտական քննարկում նույն մասնագիտության երրորդ կուրսեցիների հետ՝ հաշվի առնելով ապագա վարսահարդարների ստեղծագործական միտքը, գաղափարը և տեսակետը

**Մասնակիցներ՝** վարսահարդար մասնագիտությամբ ուսանողներ

**Ակնկալվող արդյունք**

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, կարողությունները հմտացած, մասնագիտությամբ հետաքրքրված, թիմով աշխատելու կարողությամբ և գեղագիտական ճաշակով օժտված ուսանողներ:

***Դասավանդող՝ Կ. Գաբրիելյան***

Լուսաբանում




## «Ժամանակակից կտրվածքներ»

2021 թվականի նոյեմբերի 29-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» II կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց «Ժամանակակից կտրվածքներ» թեմայով բաց դաս, որի նպատակն էր հարստացնել մասնագիտական գիտելիքները, ցուցադրել գործնական կարողություններ, ներկայացնել կտրվածքների էվոլյուցիան և նորարական մեթոդների արդիականությանը, զարգացնել գեղագիտական ճաշակ:

Հագեցած և բովանդակալից սահիկաշարի ցուցադրմանը զուգահեռ ուսանողները ներկայացրին թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն։

Ուսանելի էր նորարարական տարբեր մեթոդների կիրառմամբ ստեղծագործ վարսահարդարների մոդելավորած սանրվածքներն՝ ըստ գունատիպերի և պատմական դարաշրջանների։

Ցուցադրվեց նաև ուսանողների գործնական աշխատանքները: Դրանք առանձնանում էին իրենց անհատական ստեղծագործական լուծումներով, հմուտ մասնագիտական կատարողականությամբ։

Վարսահարդար մասնագիտությամբ առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների միջև ծավալվեց մասնագիտական զրույց-քննարկում, որի արդյունքում կարևորվեց վարսահարդար մասնագիտության անհրաժեշտությունն ու արդիականությունը:

Դասավանդող՝ Կ. Գաբրիելյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Բաց դասի պլան**

**Մասնագիտություն՝** «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար»

**Կուրս՝** III

**Թեմա՝** *«Անհատական ոճ. սանրվածքների մոդելավորում»*

**Նպատակ**

- Ներկայացնել սանրվածքների առանձնահատկությունները՝ կախված գլխի, դեմքի ձևերից և մարդաչափական տվյալներից
- Ձևավորել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն
- Ներկայացնել մոդելավորած սանրվածքի «բնավորությունը»
- Զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ
- Զարգացնել վարսավիրական էթիկան
- Ցուցադրել մասնագիտական կարողություններ և հմտություններ

**Նախապատրաստական աշխատանքներ**

*Ուսանողներին հանձնարարել փնտրել, մշակել անհրաժեշտ տեղեկատվություն ստորև նշված թեմաների շուրջ և ստեղծել բովանդակալից սահիկաշար/այլ ռեսուրսներ/*

**Ընթացքը**

**Տեսական գիտելիքների ներկայացում**

Սահիկաշարի, տեսանյութերի և այլ մեթոդական ռեսուրսների օգնությամբ ուսանողների կողմից ներկայացվում է նշված թեմաների շուրջ բովանդակալից տեղեկատվություն

- ✓ ոճը՝ որպես անհատականություն
- ✓ վարսավիրական կանոններ և էթիկա
- ✓ խնամքի միջոցների ճիշտ ընտրություն
- ✓ հագուստի և սանրվածքի ճիշտ համապատասխանություն

**Գործնական կարողությունների ցուցադրում**

*Ցուցադրել ուսանողների կողմից մոդելավորած տարբեր ոճերի նվազագույնը 6/վեց/ սանրվածք*

**Ակնկալվող արդյունք**

Մասնագիտական գիտելիքներով հարստացած, կարողություններով հմտացած, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված ուսանողներ:

**Դասավանդող՝** Ա.Ղանդիլյան




## «Անհատական ոճ. սանրվածքների մոդելավորում» թեմայով բաց դաս

2021թ-ի նոյեմբերի 30-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» III կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց «Անհատական ոճ. սանրվածքների մոդելավորում» թեմայով բաց դասը:

Բաց դասի մեկնարկը տպավորիչ էր: Սովորողները սահիկաշարի և պաստառների օգնությամբ ներկայացրեցին վարսավիրական էթիկայի կանոնները, սահուն կերպով շրջանցելով թեման՝ անդրադարձան խնամքի միջոցներին և դրանց ճիշտ ընտրությանը, կիրառմանը:

Մոդելավորված ոճային սանրվածքների ցուցադրմանը զուգահեռ ուսանողները բավականին գրագետ ձևով ներկայացրին «Ոճը՝ որպես անհատականություն» եզրույթը: Անդրադարձ կատարվեց նաև հագուստի և սանրվածքի համապատասխանության կարևորությանը:

Սովորողների կողմից մոդելավորված յուրաքանչյուր սանրվածք ուներ իր «բնավորությունը» և օժտված էր անհատի խառնվածքին բնորոշ առանձնահատկությամբ:

«Խնամքի միջոցներ» թեմայի ներկայացումը ուղեկցվեց խնամքի հատուկ ժամանակակից միջոցների ցուցադրմամբ, որոնք արտադրված էին տարբեր հեղինակավոր ֆիրմաների կողմից/յուղեր, դիմակներ, պաշտպանիչ և սնուցող ցողիչներ/:

Բաց դասին ներկա էին նաև նույն մասնագիտությամբ առաջին կուրսի ուսանողները, ովքեր իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին երրորդցիներին:

***Դասավանդող՝ Ա.Ղանդիլյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

# Ծրագիր
# Հոբելյանական ցերեկույթ՝ Սպենդիարյանի
# «Ալմաստ» օպերան խորագրով բաց դասի

Անցկացման ժամկետը՝ նոյեմբեր 2021թ.

**ԹԵՄԱ՝ Սպենդիարյանի և Թումանյանի ստեղծագործությունների արգասաբեր միաձուլումը**

**Նպատակ**

- Ծանոթացնել <<Ալմաստ>> օպերայի ստեղծման պատմությանը
- Գնահատել և արժևորել Սպենդիարյանի և Թումանյանի համատեղ ստեղծված գլուխգործոցը
- Նպաստել ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը, սերմանել հայրենասիրության և բարի գործ կատարելու ձգտումը

**Նախապատրաստական աշխատանքներ**

Ուսանողներին հանձնարարել ուսումնասիրել և ներկայացնել Սպենդիարյանի և Թումանյանի մասին տեղեկություններ,հիշողություններ,լուսանկարներ։

**Ընթացք**

1. Բացման խոսք
2. Տեսանյութի ցուցադրում /Ալմաստ օպերա-հատված,/
3. <<Թմկաբերդի առումը>> պոեմից հատվածների ընթերցում
4. Քննարկում

**Ակնկալվող արդյունք**

- Երկու մեծությունների ստեղծագործություններին ծանոթ , գնահատող, քննարկվող նյութի վերաբերյալ իրենց կարծիքն ունեցող ուսանողներ

**Դասավանդող՝ Գ.Ավետիսյան**

Լուսաբանում




## Հայ օպերային արվեստի ռահվիրան

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2021 թվականի նոյեմբերի երեսունին տեղի ունեցավ բաց դաս՝ «Հայ օպերային արվեստի ռահվիրան» խորագրով: Դասը կազմակերպվել էր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Ուսանողները թեմատիկ սահիկաշարի միջոցով ներկայացրին հայ անվանի երաժշտահանի թողած մշակութային հարուստ ժառանգությունը՝ նշելով, որ օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը կրում է նրա անունը:

Օրվա խորհուրդը երկու հանճարների հանդիպումից ծնված գեղարվեստական հրաշքի ներկայացումն էր: Ցուցադրվեց Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից հատվածներ՝ որի գեղարվեստական հիմքը անմահ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմն է: Մասնակիցները ներկայացրին «Ալմաստ» օպերայի ստեղծման պատմությունը՝ մեջբերելով Նվարդ Թումանյանի հիշողությունները:

Ֆիլմ-օպերայի ցուցադրմանը զուգընթաց ուսանողները կարդացին հատվածներ «Թմկաբերդի առումը» պոեմից, ներկայացրին թատերական դրվագներ: Գեղեցիկ պարային կատարումով ավարտվեց դասը:

Ամփոփելով դասը՝ ուսանողները փաստեցին, որ այսօր էլ Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան համարվում է հայ երաժշտական արվեստի գլուխգործոց, որի միջոցով սերունդներ են դաստիարակվում:

***Գ. Ավետիսյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Սեմինար պարապմունք ՔՊ-ից՝ «Արտակարգ իրավիճակներ» թեմայով**

Առարկա՝ ՔՊ և արտակարգ իրավիճակներ

**Նպատակը.**

1. Ծանոթացնել արտակարգ իրավիճակների դասակարգմանը:
2. Ձևավորել գիտելիքներ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ գործողությունների ճիշտ ընթացքի վերաբերյալ:
3. Զարգացնել արտակարգ իրավիճակներում ուսանողների արագ կողմնորոշվելու ունակությունը:

**Նախապատրաստական փուլ**

**Պատրաստել զեկույցներ հետևյալ ենթաթեմաներով.**

- Արտակարգ իրավիճակների դասակարգումը:
- Բնական աղետներ /երկրաշարժ, ջրհեղեղ, սողանք, բնական հրդեհներ, փոթորիկ, երաշտ, ցրտահարություն, շոգ, սելավ/:
- Տեխնածին աղետներ /հրդեհ, պայթյուն, վթար/:
- Սոցիալական աղետներ /համաճարակ, թմրամոլություն, ալկահոլիզմ, սով/:
- Քաղաքական աղետներ /պատերազմ, ցեղասպանություն, ահաբեկչություն, հասարակական անկարգություններ/:
- Մարդածին աղետներ /ճառագայթային զենք, ինֆրաձայնային զենք, հրկիզող զենք, ՄՈԶ՝ ատոմային, քիմիական, կենսաբանական, միջուկային/:

**Պատրաստել նշված ենթաթեմաներին համապատասխան սահիկաշար և տեսանյութեր:**

**Ընթացքը.**

Սեմինարավարը սահիկաշարի և տեսանյութերի միջոցով ներկայացնում է վերը նշված ենթաթեմաները:

Հարց-պատասխանների միջոցով ստուգվում են ուսանողների ձեռք բերած գիտելիքները:

**Արդյունք.**

Տրամաբանական մտածողությամբ զարգացած, նոր գիտելիքներով հարստացած ուսանողներ:

**Կազմակերպիչ՝ Ա. Վարդանյան**

Լուսաբանում




## Սեմինար պարապմունք ՔՊ-ից՝ «Արտակարգ իրավիճակներ» թեմայով

Դեկտեմբերի 7-ի հիշատակի օրվա հետ կապված Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի կողմից անցկացվեց սեմինար պարապմունք Քաղաքացիական պաշտպանություն առարկայից՝ «Արտակարգ իրավիճակներ» թեմայով: Պարապմունքի նպատակն էր ծանոթացնել արտակարգ իրավիճակների դասակարգմանը, ձևավորել գիտելիքներ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ գործողությունների ճիշտ ընթացքի վերաբերյալ և զարգացնել ուսանողների արագ կողմնորոշվելու ունակություն: Սեմինարավարը սահիկաշարի և տեսանյութերի միջոցով ներկայացրեց աղետների տեսակները՝ բնական /երկրաշարժ, ջրհեղեղ, սողանք, բնական հրդեհներ, փոթորիկ, երաշտ, ցրտահարություն, շոգ, սելավ/, տեխնածին /հրդեհ, պայթյուն, վթար/, սոցիալական աղետներ /համաճարակ, թմրամոլություն, ալկահոլիզմ, սով/, քաղաքական /պատերազմ, ցեղասպանություն, ահաբեկչություն, հասարակական անկարգություններ/, մարդածին /ճառագայթային զենք, ինֆրաձայնային զենք, հրկիզող զենք, ՄՈԶ՝ ատոմային, քիմիական, կենսաբանական, միջուկային/: Մանրամասնորեն խոսվեց քիմիական, կենսաբանական, միջուկային զենքերի և աշխարհում տարբեր պատերազմական գոտիներում դրանց կիրառման և ունեցած հետևանքների մասին: Սակայն շատ ագրեսոր երկրներ կիրառում են նշված զենքերը նույնիսկ խաղաղ բնակչության նկատմամբ՝ խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Վերջում հարց ու պատասխանի միջոցով պարզաբանվեցին մասնակիցներին հետաքրքրող բոլոր հարցերը:

***Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ՝ Ս. Կարապետյան***





## Ծրագիր




**«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ**

**Բաց դասի պլան**

**Մասնագիտություն՝** «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում-ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման»
**Կուրս՝** III
**Դասավանդող՝** Հ. Մարմարյան
**Անցկացման ամսաթիվը՝** դեկտեմբերի 6, 2022թ.
**Դասի թեման՝** «Հրաշք էլեկտրոնիկա»
**Նպատակ՝**

- Հարստացնել մասնագիտական գիտելիքները
- Ցուցադրել հետաքրքիր լուծումներով փորձեր և փարձարկումներ
- Ձեռք բերել փորձարարական հմտություններ
- Ցուցադրել մասնագիտական կարողություններ
- Խթանել հետաքրքրություն և արժևորել ընտրած մասնագիտությունը
- Ստեղծել միջառարկայական կապ/քիմիա/
- Կիրառել ծրագրավորման ոլորտի որոշակի գիտելիքներ

**Նախապատրաստական փուլ՝**
Ուսանողներին հանձնարարել որոնել, մշակել և ներկայացնել թեմատիկ տեղեկատվություն /տեսանյութերի կամ սահիկաշարի միջոցով/
Բաց դասի փորձերի համար նախապատրաստել համապատասխան նյութեր, պարագաներ և միջոցներ
**Ընթացք՝**
**Ցուցադրել ստորև նշված թեմաներով փորձերը**
**1.** ա/ «Օդային տագնապ ազդանշանի ստեղծում, փորձարկում»՝ SD քարտի ծրագրավորմամբ և ձայնի վերարտադրմամբ
բ/ «Լուսային էֆեկտներով կայծակի ստացում»
**2.** ա/ արևային տրիգերի ստեղծում, էֆեկտիվության և կիրառման ոլորտների ներկայացում
բ/թվային՝ ոչ ստանդարտ չափի թվային ժամացույցի ստեղծում, աշխատանքային սկզբունքի, պատրաստման տեխնոլոգիայի ներկայացում
Փորձերին զուգահեռ ցուցադրվում են սահիկաշարեր և թեմատիկ տեսանյութեր:
Ուսանողները միաժամանակ մեկնաբանում են ցուցադրված երևույթները և ներկայացնում կիրառված սարքավորումների վերաբերյալ անհրաժեշտ հագեցած տեղեկատվություն:
**Ակնկալվող արդյունք**
Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, հետազոտական աշխատանքներ կատարելու և մասնագիտական կարողություններով օժտված ուսանողներ:

**Մասնագիտական մեթոդմիավորում**




**«Հրաշք Էլեկտրոնիկա» թեմայով բաց դաս**

2021 թվականի դեկտեմբերի 6-ին «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» մասնագիտությամբ III կուրսում անցկացվեց «Հրաշք Էլեկտրոնիկա» թեմայով բաց դաս:
Ուսանողները դասը սկսեցին էլեկտրոնիկայի վերաբերյալ նպատակային նախաբանով: Էլեկտրոնիկան՝ որպես նոր տեխնոլոգիա, իր լայն հորիզոնով զբաղեցնում է մեր առօրյայի գրեթե ամբողջ մասը: Այդ նպատակով հաճախակի կիրառելի, առեծվածային երևույթներն իրենց հետաքրքիր լուծումներով մատուցվեց հանդիսատեսին: Թեմայի վերաբերյալ տեսական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ ուսանողները սահուն կերպով շրջանցում կատարեցին գործնական աշխատանքների ցուցադրում: Միաժամանակ մեկնաբանվեցին ընթացիկ փորձերը՝ մանրամասն ներկայացնելով կիրառված սարքավորումների վերաբերյալ անհրաժեշտ գիտական տեղեկատվություն: Հատկապես տպավորիչ էր սովորողների կողմից ստեղծված թվային ոչ ստանդարտ ժամացույցը, որի աշխատանքի սկզբունքը և պատրաստման տեխնոլոգիան ներկայացվեց աշխատանքային թիմի կողմից: Ուշագրավ էր ինքնաստեղծ արևային տրիգերների ցուցադրումը, ինչպես նաև դրանց կիրառման ոլորտի և էֆեկտիվության մասին տեղեկատվության մեկնաբանումը:
Բաց դասի ժամանակ բազմաբնույթ թեմատիկ տեսանյութերն ուղեկցվեցին գրագետ և հակիրճ մեկնաբանություններով:
Տպավորիչ էր նաև դասի ավարտին լուսային էֆեկտներով կայծակի իմիտացիան:
Ուսանողները բաց դասի նախապատրաստական փուլում կատարել էին հետազոտական աշխատաքներ, դասին ներկայացված ռադիոաշխատանքներում ցուցաբերվեց անհատական և ստեղծագործական մոտեցումներ, դրսևորվեց գրագետ մոտեցում:

*Դասավանդող՝ Հ. Մարմարյան*

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




### «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԿԵՐՏ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 14-ին նախագահական նստավայրում տեղի ունեցավ «Աշկերտության զարգացումը Հայաստանում՝ շվեյցարական փորձի հիման վրա» ծրագրի շրջանակում կազմակերպված՝ «Լավագույն աշկերտ» մրցանակաբաշխությունը: Ծրագիրը, որն իրականացվում է «Միասին» հիմնադրամի և շվեյցարական GAN կազմակերպության հետ համատեղ՝ Ժնևի քաղաքապետարանի աջակցությամբ, նպատակ ունի մարզերի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար սահուն անցում ապահովել ուսումնական հաստատությունից աշխատաշուկա:
Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանից «Լավագույն աշկերտ» ընտրվեց Փայտի գեղարվեստական փորագրող մասնագիտությամբ երրորդ կուրսի ուսանող Արտավազդ Գասպարյանը, ով խրախուսվեց պարգևներով, իսկ Խոհարարական գործ՝ խոհարար մասնագիտությամբ երրորդ կուրսի ուսանող Զոհրաբ Գևորգյանը ստացավ ծրագրի մասնակցության հավաստագիր:





## Լուսաբանում




### Հայաստանի հմտություններ 2021

Դեկտեմբերի 17-ին տեղի ունեցավ «Հայաստանի հմտություններ 2021» ազգային փուլի ամփոփումը: Մրցութային մասնագիտություններն էին մեխատրոնիկա, վեբ տեխնոլոգիաներ, ՏՏ ցանցային համակարգի կառավարում, ոսկերչություն, խոհարարություն և նորաձևության տեխնոլոգի: Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը ազգային փուլում գրանցեց լուրջ հաղթանակներ:

**«Ոսկերչություն» մասնագիտություն.**
Ոսկե մեդալ /I տեղ/ - Վարդան Գալստյան
Արծաթե մեդալ /II տեղ/ - Նարեկ Ջիլիմյան
Բրոնզե մեդալ /III տեղ/ - Կարլեն Շահբազյան

**«Խոհարարություն» մասնգիտություն.**
Արծաթե մեդալ /II տեղ/ - Ջոհրաբ Գևորգյան







## Լուսաբանում




### ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

2021 թվականի հունվարի 27–ին ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Հաղորդակցման կարողությունների հմտությունների բացահայտում» թեմայվ դասընթաց՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտությամբ 1-ին կուսի ուսանողների համար:

**Դասընթացի ընդհանուր նպատակն է.**
Ուսանողներին հաղորդակցման էության, տեսակների մասին գիտական գիտելիքների հաղորդում ու արդյունավետ հաղորդակցման, համոզման կարողությունների, հմտությունների ձևավորումն է:

**Կարիերայի ուղղորդման կենտրոն**










## Սոցիալական ներառում հանուն դրական փոփոխությունների

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղղորդմամբ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողներ Աիարոն Մելիքյանը և Զոհրաբ Գևորգյանը, «Համակարգչային օպերատորություն՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Սիմոնյանը, 2021 թվականի փետրվարի 18-21-ը մասնակցեցին «Խաղաղության հիմնախնդիրների հետազոտության կովկասյան ինստիտուտի» կողմից իրականացվող «Սոցիալական ներառում հանուն դրական փոփոխությունների» խորագրով ուսուցողական ծրագրին: Ծրագիրը նվիրված էր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի երիտասարդների կողմից սոցիալական իրավունքների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

***Կարիերայի ուղղորդման կենտրոն***







Լուսաբանում




# Ի՞ՆՉ Է ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԿԳՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից 2021 թվականի մարտի 31-ին անցկացվեց իրազեկիչ սեմինար-դասընթաց, այս անգամ «Խոհարարական գործ՝ խոհարար» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» մասնագիտությամբ սովորող առաջին կուրսերի ուսանողների համար:

**Դասընթացի ընթացքում ուսումնասիրվեցին հետևյալ թեմաները.**

- **Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը**
- **Մասնագիտական կողմնորոշման խնդիրը, սուբյեկտները**
- **Մասնագիտական զարգացման փուլերը**
- **Մանագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակը**
- **Ծառայությունների ձևերը**
- **6 քայլ մասնագիտության ընտրության հարցում**
- **Ջ. Հոլլանդի 6 անձնային տիպերը**

Դասընթացը վարեց՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը: Նա սպառիչ և գրագետ ներկայացրեց դասընթացի թեմաները և պատասխանեց բոլոր հարցադրումներին:

**Կարիերայի ուղղորդման կենտրոն**










**Տեղեկատվական հանդիպումներ Գյումրի և Ախուրյան համայնքների միջնակարգ և հիմնական դպրոցներում**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Լևոն Իգիթյանը 2021 թվականի ապրիլի 13-17-ը տեղեկատվական հանդիպումներ անցկացրեց Գյումրի և Ախուրյան համայնքների միջնակարգ և հիմնական դպրոցներում: Հանդիպումների նպատակն էր մանկավարժական հանրությանը և 9-րդ դասարանի աշակերտներին տրամադրել տեղեկատվություն՝

- մասնագիտական կողմնորոշման գործիքակազմի և դրանց արդյունավետ կիրառման, ինչպես նաև ուսումնարանի գործունեության և հաջողությունների վերաբերյալ
- ծանոթացնել «Ուսանողական/աշակերտական ընկերություն»-ների փորձարարական ծրագրին, որը գործում է «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» հիմնադրամի համագործակցությամբ՝ «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում
- ծանոթացնել ուսումնարանում գործող մասնագիտություններին.

1. Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի
2. Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար
3. Խոհարարական գործ՝ խոհարար
4. Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ (ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման )
5. Ոսկերչություն՝ ոսկերիչ
6. Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի
7. Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի
8. Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում

**Կարիերայի ուղղորդման կենտրոն**